



# ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



## ՏԱՇԻՐՈՒՄ

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

ԼՈՌԻ, ՄԱՅԻՍ 2013

## ՆԱԽԱԲԱՆ

Սույն համայնքային զարգացման նախագիծը կազմվել է տեղի շահագրգիռ կազմակերպությունների աշխատանքային խմբերի կողմից՝ լիցենզավորված փորձագետների գլխավորությամբ՝ մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման մեթոդաբանության կիրառմամբ, նպատակ ունենալով վերլուծել Տաշիր համայնքի տեղային տնտեսությունը, բացահայտել տնտեսական զարգացման ռազմավարական ճյուղերը և նախատեսել միջամտություններ, որոնք կհանգեցնեն ներառական տնտեսական աճի: Ներգրավելով տեղի բնակչությանը տվյալների հավաքագրման և վերլուծման, ինչպես նաև նախաձեռնությունների ներկայացման և հաստատման գործում՝ նախագիծը հետևողական է տեղային սեփականության կառուցմանը, ինչը խթան կհանդիսանա համայնքի բնակչության կողմից իրականացվող գործողություններին՝ նախաձեռնություններն իրագործված տեսնելու համար:

Համայնքների տնտեսությունների վերլուծությամբ և մրցակցային առավելությունների որոշմամբ բնական և մարդկածին ռեսուրսների ոլորտում՝ աշխատանքային խումբը բացահայտել է այն ռազմավարական ոլորտները, որոնք Հայաստանում այլ շրջանների համեմատ առավել արժեքավոր են: Այն ոլորտները, որոնք ավելի խորն են ուսումնասիրվել, դա հողագործությունն է, խոշոր եղջերավորների անասնապահությունը և պանրի արտադրությունը: Խումբը եկավ այն եզրահանգմանը, որ կարևոր էր զարգացնել միջամտության ձևեր, որոնք իրենց ազդեցությունը կունենան տնտեսության բազմաթիվ հեռանկարային ոլորտների վրա և հանդես եկան հետևյալ չորս միջամտությունների առաջարկով՝ հստակ քայլեր առաջարկելով տարբեր շահագրգիռ կողմերի համար:

- (1) Հակակարկտային կայանների տեղադրում, որը կհանգեցնի հողագործության հետագա զարգացմանը;
- (2) Կապեր ստեղծել ֆերմերների և որակյալ սերմի մատակարարների միջև որը կհանգեցնի հողագործության հետագա զարգացմանը;
- (3) Վերանորոգել երկու կամուրջները, որոնք տանում են արոտավայրեր և ապահովել ջրով, որի նպատակն է բարձրացնել անասնապահության արդյունավետությունը
- (4) Ֆերմերային տնտեսությունների արդիականացումը և ֆերմերների կողմից սեփական մեքենասարքավորումների ձեռքբերումը ցածր տոկոսադրույքով կամ անտոկոս վարկերի միջոցով, որի արդյունքում կնվազի կաթի արտադրական արժեքը:

Սույն նախագիծը մշակվել է JOIN ծրագրի շրջանակներում, որը ՔԷՅԻԻ կողմից իրականացվում է Հարավային Կովկասում՝ Վրաստանում Քաղաքացիական Զարգացման Գործակալության և Հայաստանում Ագրոբիզնեսի և Գյուղական զարգացման կենտրոնի հետ համատեղ: Այն ֆինանսավորվում է Ավստրիական Զարգացման Համագործակցության կողմից (ԱԶՀ) և նպաստում է ԱԶՀ-ի կողմից 2012-2020թթ. ռազմավարությանը Վրաստանի և Հայաստանի համար:

JOIN ծրագիրը նպաստում է աղքատության հաղթահարմանը Վրաստանի և Հայաստանի սահմանամերձ շրջաններում իշխանություն, քաղաքացիական հասարակություն և անհատ

սեկտորի միջև համագործակցության բարելավմամբ՝ ստեղծելով հասանելի միջավայր հոգուտ աղքատության սոցիալ-տնտեսական զարգացման՝ մասնակցային պլանավորման, բարելավված համագործակցության և բոլոր երեք ոլորտների միջև շուկային առնչվող տեղեկատվության փոխանակման միջոցով: Ծրագրի թիրախներն են՝ վրացական Գարդաբանի, Մարնեուլի, Բոլնիսի, Դմանիսի, Նինոցմինդա և Ախալքալակ համայնքները, և հայկական Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերը:

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿԻՑ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

CARE Ինթերնեշնլի Կովկասյան գրասենյակ



Բիզնես Պարետա ՍՊԸ



Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն



## Բովանդակություն

Նախաբան.....	2
Համագործակից կառույցներ .....	3
Մեթոդոլոգիա.....	5
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ .....	7
Բնակչության զբաղվածությունը .....	7
Համայնքում ստեղծվող համախառն արդյունքը.....	8
Տաշիր համայնքի մրցակցային առավելությունները .....	9
Տաշիրի տնտեսության հիմնական ճյուղերի վերլուծություն .....	10
Ցորենի մշակություն .....	10
Կարտոֆիլագործություն.....	14
Անասնակերի արտադրություն.....	16
Առաջարկություններ ԵՎ նախաձեռնություններ հողագործության զարգացման ոլորտում.....	16
Անասնապահություն .....	17
Առաջարկություններ և նախաձեռնություններ անասնապահության զարգացման ոլորտում.....	22
Պանրի և կաթնամթերքի արտադրության ոլորտ.....	23
Պանրի արժեքային շղթան ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ .....	24
Պանրի արժեշտայի վերլուծություն.....	25
Կանանց մասնակցությունը կաթնամթերքի արժեղթայի մեջ .....	28
Առաջարկություններ և նախաձեռնություններ պանրագործության զարգացման ոլորտում .....	29
Տնտեսության այլ ճյուղեր.....	30

## ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱ

Սույն համայնքային զարգացման նախագծում կիրառվել է մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման մեթոդաբանությունը, որը ներկայացվել է Հայաստանում Գերմանիայի Հասարակության Միջազգային համագործակցության (GIZ, նախկինում՝ GTZ) և իրագործվել է 21 համայնքում: Սույն մեթոդաբանությունը կազմվել է Բիզնես Պարետա խորհրդատվական ընկերության մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման փորձագետներ Արտակ Դադոյանի և Կարեն Կողմից: Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման նպատակն է գնահատել համայնքային տնտեսությունը՝ բացահայտելու մրցակցային առավելությունները, առաջարկել նախաձեռնություններ, որոնք կբարելավեն մրցակցությունը, եկամտի աղբյուր կլինեն և կստեղծեն աշխատատեղեր: Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման սկզբունքներն են՝

- Մասնակցային մեթոդ;
- Կենտրոնանալը ուժեղ կողմերի վրա, ավելին քան թույլ կողմերի վրա;
- Արագ և տեսանելի արդյունք;
- Հաղորդակցում և երկխոսություն համայնքային գործիչների միջև;
- Ներքնից վերև փոփոխություն;
- Զարգացում՝ հիմնված տեղի ռեսուրսների վրա:

Մրցակցային առավելությունների մասնակցային գնահատման ընթացակարգը բաղկացած է հետևյալ փուլերից.

- Տեղային թիմերի հիմնում՝ բաղկացած հիմնական համայնքային գործիչներից
- Տնտեսության առկա վիճակի և մրցակցային առավելությունների գնահատում տեղային թիմի կողմից (փորձագետների հետ համատեղ), տեղային զարգացման նախաձեռնությունների բացահայտում
- Մեկնարկային հանդիպումներ՝ համայնքի շահագրգիռ կողմերին տեղեկացնելու իրենց համայնքում տեղային զարգացման նախաձեռնություններ ծրագրի մեկնարկի մասին, որտեղ համայնքային գործիչները առաջին անգամ են ներառվելու ծրագրում
- Հարցազրույցներ և փոքրածավալ աշխատանքային հանդիպումներ. այս փուլում ավելի մեծ թվով համայնքային գործիչներ են ներառված
- Արդյունքների մշակում. այս փուլում տեղային թիմը մշակում և ամփոփում է հարցազրույցների և աշխատանքային հանդիպումների արդյունքները
- Արդյունքների ներկայացում, որտեղ համայնքային գործիչները տեղեկացվում են ծրագրի արդյունքների և առաջարկված տեղային զարգացման նախաձեռնությունների մասին
- Շահագրգիռ կողմերի հետ համատեղ գործողությունների պլանի մշակում առաջարկվող նախաձեռնությունների համար

Սույն մեթոդաբանությունը հիմնված է 7 թվով մարդկանց(5 տղամարդ և 2 կին) հիմնական խմբի աշխատանքների վրա՝ ներառելով 4 թրեյնինգի և վերլուծության օր և 7 վիճակագրական

տվյալների հավաքագրման իր, որը բաղկացած է 30 հարցազրույցներ տեղի բնակչության շրջանում՝ 13 թվով տարբեր գործունեության ոլորտներից:



## **ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔ**

Տաշիրը քաղաքային համայնք է Տաշիրի տարածաշրջանում, նախկին Կալինինոյի շրջանի վարչական կենտրոնը: Քաղաքի հեռավորությունը մայրաքաղաքից 163կմ է, իսկ Լոռու մարզկենտրոնից՝ 52 կմ: Քաղաքի միջով հոսում է Դեբեդ գետի վտակը հանդիսացող Տաշիր գետը: Հիմնադրվել է 1844 թ-ին :

Տաշիրով է անցնում Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական մայրուղին, որն ունի ռազմավարական նշանակություն: Հարթավայրում՝ ծովի մակերևույթից 1500մ բարձրության վրա բարենպաստ բնակլիմայական պայմանների ու ալպիական մարգագետինների առկայությունը հիմքեր են ստեղծում, որպեսզի զարգանան անասնապահությունն ու կաթի վերամշակումը:

Տնային տնտեսությունների թիվը 3715 է:

Բնակչության սեռային կազմում տղամարդիկ կազմում են 43%, կանայք՝ 57%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 25%, աշխատունակները՝ 60%, հետաշխատունակները՝ 15%: Կենսաթոշակառուների թիվը 1481 է:

Քաղաքի տնտեսությունը մասնագիտացված է սննդարդյունաբերության մեջ, որում մեծ տեսակարար կշիռ ունի պանրի արտադրությունը:

## **Բնակչության զբաղվածությունը**

Բնակիչները զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ, ինչպես նաև անասնապահությամբ, թռչնաբուծությամբ և մեղվապահությամբ:


Համայնքն ունի 5760 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը 4000 գլուխ է, մանր եղջերավորներինը՝ 5000 գլուխ, 3000 գլուխ խոզ, 873 մեղվաընտանիք:

Բացի գյուղատնտեսությունից, Տաշիր համայնքի եկամտի աղբյուր են հանդիսանում նաև առևտրի, քարամշակման, ծառայությունների և սպասարկման ոլորտները, ինչպես նաև արտագնա աշխատանքից ստացվող եկամուտները, որոնք ևս զգալի մաս են կազմում տնտեսության մեջ: Համայնք մտնող տրանսֆերտների տարեկան գումարը կազմում է մոտ 25 մլն դոլար:

## Համայնքում ստեղծվող համախառն արդյունքը

Ոլորտ	Մլն. դրամ
<b>Հողագործություն</b>	
Կարտոֆիլ	660
Հացահատիկ	576
<b>Անասնապահություն</b>	
Կաթի արտադրություն	900
Մսի արտադրություն	1056
Սպասարկում և ծառայություններ	850
Որից գյուղ. տեխնիկ. ծառայություն	250
<b>Առևտուր</b>	
Արտադրություն	3 600
Որից՝ կաթնամթերքի արտադրություն	3 200
<b>Ընդամենը</b>	<b>8 542</b>





## ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### Բնածին առավելություններ

- ⇒ Աղբյուրների սառնորակ և քաղցրահամ ջուր:
- ⇒ Բուսականության բազմազանություն՝ 350 և ավելի ծաղիկների առկայություն:
- ⇒ Ալպիական գոտիների բազմատեսակ բույսերից ստացված մեղր:

### Մարդածին առավելություն

- ⇒ ԱՊՀ – ում ճանաչված «Տաշիր» բրենդ:
- ⇒ Զարգացած անասնապահություն:
- ⇒ Պանրագործությամբ հայտնի կենտրոն, «Դուստր Մելանյա» կաթնամթերքի արտադրամասի առկայություն /ՀՀ առաջատար պանրագործություն/:

## **ՏԱՇԻՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

### **Հողագործություն**

#### **Ներգրավված է 600 տնտեսություն**

Տաշիր համայնքն ունի 3500 հա վարելահող, որտեղ մշակում են հետևյալ մշակաբույսերը.

- Ցորեն - 625 հա:
- Կարտոֆիլ - 25 հա :
- Առվույտ և տիմոֆեյկա - 20 հա:
- 2700 հա անասնակեր, բազմամյա խոտաբույսեր (այս հատվածում նոր ցանքեր չեն իրականացվում, տարածքը նմանվել է խոտհարքի):
- 200 հա տնամերձ, հիմնականում՝ կարտոֆիլ:

### **Ցորենի մշակություն**

Հացահատիկի մշակմամբ զբաղվող տնտեսությունների բաշխվածությունը ըստ մեծության.

- 1 գերխոշոր՝ 400 հա Տաշիր համայնքում և 600 հա հարևան համայնքներից վարձակալած վարելահողերում:
- 5 խոշոր - 18-20 հա:
- 15 միջին - 3-8 հա:
- 50 փոքր - 0.5- 3 հա:

Ըստ հողագործների, մենչև այսօր ցորենի ամենաարդյունավետ սերմացուն եղել է „Мирлебедь,, տեսակը, որի 1 հա-ից 1990-ականներին ստացել են մինչև 9 տոննա բերք, միջինը՝ 6-7 տոննա: Ներկայում 1 հա ցորենի բերքատվությունը առաջատար մշակողների մոտ կազմում է 2.5-3.5 տոննա, իսկ համայնքում միջին բերքատվությունը 2 տոննա է:

Վարելահողերը անջրդի են, սակայն դա հիմնականում չի ազդում բերքատվության վրա, քանզի հողերը խոնավ են և ջրելու կարիք գրեթե չի զգացվում: Իսկ կարկուտի գործոնը զգալի վնաս է հասցնում մշակող տնտեսություններին: Միայն անցած տարի կարկուտը վնասել է ցորենի մշակված դաշտերի մոտ 200 հեկտարը, որտեղից հավաքել են սպասվող բերքի մոտ 40%-ը: Համայնքում հակակարկուտային կայաններ չկան:

Խոշոր ֆերմերները դեղանյութեր ձեռք են բերում “Ավգուստ” ֆիրմայից:

Ամենախոշոր ընկերությունը, որը մշակում է 1000 հա ցորեն, ունի սեփական գյուղտեխնիկա՝ 2 ժամանակակից կոմբայն, բեռնատարներ, վար ու ցանք իրականացնող տեխնիկաներ: Ընթացիկ

տարում նախատեսում են հիմնել խտացված անասնակերի արտադրություն: Արդեն հիմնել են ցորենի պահեստավորման բազա՝ 10 000 տոննա տարողությամբ: Բաղկացած է 4 բունկերներից՝ յուրաքանչյուրը 2500 տ.: Մոտ ապագայում նախատեսում են նաև ալրաղացի հիմնում:

Համայնքում ստացված ցորենի բերքի հիմնական մասը սպառվում է Երևանում՝ վերամշակող և վերավաճառող ընկերությունների կողմից:

**Հացահատիկի մշակման համար կատարվող ծախսերը մեկ հա-ի կտրվածքով**

Աշխատանքի տեսակը/անվանումը	Նկարագրություն	Գինը (դրամ)
Սերմացու	1 հա-ի համար հարկավոր է 300կգ՝ 1կգ-ի գինը կազմում է 200 դրամ	60 000
Ախտահանում		6 000
Վար	Դիզ. վառելիք	20 000
Կուլտիվացիա		17 000
Շարքացան		10 000
Գլանում		5 000
Դեղանյութի սրսկում		13 000
Բերքահավաք	Կոմբայնի վարձ	35 000
Տեղափոխում	Տեղափոխմանը մասնակցում են երկու բանվոր՝ յուրաքանչյուրի ծառայության վճարը 6000 դրամ է, ևս 10 000 դրամ բեռնատարի վարձն է:	22 000
Պարարտանյութ	1 հա-ի համար օգտագործվում է 4 պարկ, 1 պարկի արժեքն է 6000 դրամ	24000
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>212 000</b>

Հաշվարկն արված է հաշվի առնելով

այն ֆերմերների տնտեսավարման փորձը, ովքեր ունեն սեփական տեխնիկա և իրենք են կատարում վար ու ցանքի աշխատանքները:

**Հացահատիկի ոլորտում առաջատարների արտադրողականության հաշվարկ.**

Դասակարգում		Ցուցանիշ
1	1 հա-ից ստացվող միջին բերք	3000 կգ
2	1 կգ-ի միջին մեծածախ գինը	160 դրամ
3	1 հա-ից ստացված եկամուտը (1x2)	480 000 դրամ
4	1 հա-ի վրա կատարված նյութական ծախսերը	200 000 դրամ
5	1 հա-ի վրա կատարվող աշխատանքային ծախսումներ	12 000 դրամ
6	1 հա-ից ստացվող շահույթը (3-4-5)	268 000 դրամ
7	1 հա-ի հաշվով ավելացված արժեքը (3-4)	280 000 դրամ
8	1 հա-ի վրա աշխատած մարդ/օրերի քանակը	15
9	Մեկ մարդու օրական արտադրողականությունը = (3-4): 8	18 700 դրամ

Այսպիսով, Տաշիրում 1 հա ցորենի մշակման համար մարդը ծախսում է 15 օր, յուրաքանչյուր օրը ստեղծելով 18 700 դրամի նոր արժեք:

Չնայած, որ Տաշիրը ցորենի բերքատվությամբ զիջում է ՀՀ առաջատար համայնքներին (օրինակ Ագատանին, որտեղ ցորենի միջին բերքատվությունը 1 հա-ից 4տ. է), այնուամենայնիվ, ոլորտի արտադրողականությամբ դեռ մի փոքր էլ գերազանցում է: Այս փաստը պայմանավորված է Տաշիրում վարելահողերի վարձակալման ցածր սակագներով (1 հա-ը 8 հազ. դրամ, իսկ Ագատանում՝ մինչև 100 հազ. դրամ) և հողերի խոնավությամբ (ռոռոգման ջրի և ջրողի գումար չի ծախսվում), ինչի արդյունքում առնվազն 100 000 դրամով կրճատվում են մշակման ծախսերը:

**Ստորև ներկայացված է հողագործության ճյուղի վերլուծությունը “Որտերի ադամանդ” գործիքով**, որը հնարավորություն է տալիս գնահատել համայնքի հիմնական ճյուղերի վիճակը միաժամանակ 4 տեսանկյուններից (ոլորտի գործարարների (տվյալ դեպքում հողագործների և ֆերմերների) հնարավորությունները, ուժեղ և թույլ կողմերը, ոլորտի գործոնների որակը, շուկան՝ պահանջարկի որակը, հարակից/օժանդակող ճյուղերի որակը), որոնց հանրագումարը ցույց է տալիս ճյուղի ամբողջական պատկերը:


*Յորենի մշակման*

*ճյուղի վերլուծություն*

*Պորտերի ադամանդի*




*մեթոդով*

Առաջատար հողագործների ներքին հատկանիշները	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Նոր տեխնոլոգիաների տիրապետում:	Մեխանիզացիայի բարդություններ՝ սարքավորումների պակաս:
Արդյունավետ (ճիշտ ժամանակին) պայքար հիվանդությունների և վնասատուների դեմ:	Համագործակցությունը տնտեսությունների միջև թույլ է:
1 խոշոր տնտեսություն ունի սեփական ժամանակակից տեխնիկա /կոմբայններ, բեռնատարներ.../:	Շուկայավարման հմտությունների պակաս:
Մնացած խոշորներն ունեն տեխնիկաներ (հին), և իրենք էլ մեխանիզատորներ են:	



Գործունների որակ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Բերքատու հողեր:	Սահմանափակ աշխատուժ:
Անջրդի հողեր (հողերը խոնավ են և ջրելու անհրաժեշտություն հիմնականում չկա):	Հակակարկտային կայանների բացակայություն:
Հասանելի վարկեր:	Վնասների փոխհատուցման բացակայություն:
Տեղումների շատ քանակ:	Պրոֆեսիոնալ մասնագիտական վերապատրաստման բացակայություն:
	Վարկերի բարձր տոկոսադրույք:

Պահանջարկի որակ
Տեղական ցորենը մեծ պահանջարկ է վայելում հայկական շուկայում: 1կգ-ի արժեքը շուկայում 160-230 դրամ է (ներկրման գինը 375 \$-1տ, մոտ 155 դրամ): Համայնքում կան 3-4 մթերող ընկերությունների ներկայացուցչություններ, որոնք էլ ընդունում են բերքի մոտ 60 տոկոսը, մնացածը սպառվում է համայնքի տնտեսությունների կողմից:



Հարակից ճյուղերի որակ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Համայնքում թունաքիմիկատների վաճառակետերի առկայություն:	Յորենի սերմնաբուծության բացակայություն:
Առկա են որակյալ սերմացուների վաճառակետեր:	Համայնքում մաշված և սակավաթիվ գյուղտեխնիկա (15 հատ):
	Վերամշակման բացակայություն:

### Կարտոֆիլագործություն.

Տաշիրում մշակվում է 25 հա կարտոֆիլ վարելահողերում, և 200 հա՝ տնամերձերում՝ ձմռան պարենը համալրելու նպատակով: Քաղաքապետարանի տվյալներով վերջին 10 տարիների ընթացքում մոտ 10 անգամ կրճատվել են կարտոֆիլի մշակվող տարածքները, պայմանավորված շուկայում գնային հաճախակի տատանումներով և պահանջարկի նվազմամբ:

Համայնքում գործում է սերմացու արտադրող մեկ տնտեսություն, որն ամեն տարի օգտագործում է էլիտար սերմացու, իսկ մնացած կարտոֆիլագործները ձեռք են բերում համայնքում 1-ին և 2-րդ տարիների մշակումից ստացած սերմացուն՝ 1կգ-ը 150-200 դրամով: 1հա համար օգտագործում են 3 տոննա սերմացու, ստանում են միջինը 25 տոննա կարտոֆիլ:

### Կարտոֆիլի մշակման ծախսերը 1հա-ի հաշվարկով

Աշխատանքի տեսակը/անվանումը	Նկարագրություն	Գինը 1հա կտրվածքով
Վար աշնանը		35 000
Վար գարնանը	Կուլտիվացիաի դեպքում 17000 դրամ	35 000
Ցանք		30 000
Սերմի բեռնաթափում	Աշխատանքին մասնակցում է 3մարդ՝ 1աշխ. արժեքը 5000 դրամ	15000
Բեռնատար		8000
Մոլախոտի դեղանյութ	Օգտագործվում է գերբեցիտ տեսակի դեղանյութ	20000
Դեղանյութի սրսկում		10000
Կուլտիվացիա		45000
Ազոտական պարարտանյութ	1հա-ի համար օգտագործվում է 6 պարկ՝ 1պարկի արժեքը կազմում է 9000 դրամ, սուբսիդավորման դեպքում՝ 6000դրամ	36 000
Թփերի դեղանյութ	Մեկ անգամվա օգտագործման համար ծախսվում է 25 000դրամ՝ կատարվում է 2 անգամ	50 000
Թփերի սրսկում	Կատարվում է 2 անգամ, 1 սրսկման արժեքը կազմում է 10 000 դրամ	20 000
Թփերի կոտրում	Բերքահավաքից առաջ թփերը հավաքվում է	6 000
Բերքահավաք		35 000
Բերք հավաքող մարդիկ	1հա բերքահավաքի աշխատողների թիվը կազմում է 12 մարդ՝ 1աշխատուժի արժեքն է 3000դրամ	36 000
Բեռնափոխադրում		10 000
Տեսակավորում	Տեսակավորմանը նույնպես մասնակցում են 12 մարդ՝ 1հոգու աշխատավարձը 3000դրամ	36 000
Ընդամենը աշխատանքներ		442 000
Սերմացու	3տ. x 200 դրամ	600 000

ԸՆԴԱՄԵՆԸ		1 042 000 դրամ
----------	--	-------------------

Կարտոֆիլի արտադրողականությունը մեկ մարդ/օր հաշվարկով.

Կարտոֆիլ		
1	1 հա-ից ստացվող միջին բերք	25 000 կգ
2	1 կգ-ի միջին մեծածախ գինը (պարեն + սերմացու)	100 դրամ
3	1 հա-ից ստացված եկամուտը	2 500 000
4	1 հա-ի վրա կատարված նյութական ծախսերը	970 000
5	1 հա-ի վրա կատարվող աշխատանքային ծախսումներ	72 000
6	1 հա-ից ստացվող շահույթը (3-4-5)	1 458 000
7	1 հա-ի հաշվով ավելացված արժեքը (3-4)	1 530 000
8	1 հա-ի վրա աշխատած մարդ/օրերի քանակը	80
	Մեկ մարդու օրական արտադրողականությունը = (3-4): 8	19 125 դրամ

Կարտոֆիլի մշակության մեջ ծախսված օրերից յուրաքանչյուրում 1 մարդը ստեղծում է 19 125 դրամին հավասար նոր արժեք: Այստեղ հաշվարկն արված է այն տնտեսության մասով, որը գյուղտեխնիկայի ծառայությունների դիմաց վճարում է:

## Անասնակերի արտադրություն

Անասնակերի ստացման համար հատկացված է հսկայական տարածք՝ մոտ 2800 հա: Բերքատվությունը վարելահողերի գերակշիռ մասում 1 հա-ից 5 տոննա է: Մեզոնի կարճությամբ պայմանավորված՝ հնձում են մեկ անգամ (թե առվույտ, թե խոտ), այդ պատճառով էլ բերքատվությամբ համայնքը զգալիորեն զիջում է այլ առաջատար համայնքներին: Սակայն խոշոր ֆերմերների տվյալներով, եթե աճեցնում են խառը կազմով անասնակեր (ցորեն, առվույտ, վարսակ, ոլոռ և այլն) և հնձում այն դեռ լրիվ չհասած՝ այսինքն բերքը ցողունի հետ, ապա նորմալ տարում (կարկուտ, երաշտ և գերխոնավություն չլինելու դեպքում) հնարավոր է հնձել 25 տոննա բերք, որը նաև ավելի մեծ սննդային արժեք է պարունակում, քան սովորական խոտը:

**Հողագործության ճյուղերի արտադրողականության համեմատական.**

	Ցուցանիշներ	Կարտոֆիլ	Ցորեն
1	1հա-ի վրա աշխատած մարդ/օրերի քանակը	80	15
2	Մեկ մարդու օրական արտադրողականությունը	19 125 դրամ	17 400 դրամ

Ինչպես մնացած համայնքներում, Տաշիրում ևս ցորենի մշակման արտադրողականությունը զիջում է կարտոֆիլագործությանը: Բայց, ի տարբերություն կարտոֆիլի, ցորենի պահանջարկը շուկայում ավելի մեծ է և գներն էլ արդարացված: 1 կգ ցորենը (զարին նույնպես գրեթե նույն գներով հետևում է ցորենին) հայկական շուկաներում վաճառվում է 160-230 դրամ, կախված սեզոնից, քանակից և այլն, իսկ ներկրվում է այն վերամշակող ընկերությունների կողմից 1 տոննայի դիմաց 375\$ -ով (1 կգ –ը 155 դրամ):

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գործողություններ	Պատասխանատուներ
Հակակարկտակայանների տեղադրում	CARE, ՓՄՁ ՉԱԿ, այլ աջակից կառույցներ
Նոր գյուղտեխնիկայի, կոմբայնների ձեռքբերման մատչելի պայմանների ապահովում	ՓՄՁ ՉԱԿ, այլ աջակից կառույցներ
Նոր գյուղտեխնիկայի ձեռք բերում	Մեխանիզատորներ, հողագործներ
Որակյալ սերմացուների մատակարարների և հողագործների միջև կապերի ապահովում	ՓՄՁ ՉԱԿ



## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Դեռևս խորհրդային կարգերի ժամանակներից Տաշիրը եղել է տոհմային անասնապահական գոտի: Անասնապահությամբ Տաշիրում զբաղվում է մոտ 500 տնտեսություն: Համայնքում կա 4000 գլուխ խոշոր եղջերավոր՝ որից 1800-ը կթու կովեր, մոտ 5000 գլուխ ոչխար և խոզ՝ 3000 գլուխ: Առկա են տարբեր ցեղատեսակներ: Համայնքն ունի նաև 1000 հա արոտավայր և 1000 հա խոտհարք:

Համայնքում կա մոտ 50 տնտեսություն, որոնք զբաղվում են ոչխարաբուծությամբ և միասին ունեն մոտ 5000 գլուխ մանր եղջերավոր:

### Մանի եղջերավորների բաշխվածությունն ըստ տնտեսությունների մեծության

Ֆերմերների դասակարգում	Անասնազվիաքանակ	Մասնագիտացումը
1 խոշոր ֆերմեր	1500 գլուխ	գառների վաճառք
4 միջին ֆերմեր	400-500 գլուխ	պանիր, գառների վաճառք
40 փոքր ֆերմերներ	5-20 գլուխ	պանիր, գառների վաճառք

Գառան կենդանի քաշը վաճառում են միջնորդներին՝ 1 կգ-ը 900 դրամ, իսկ անմիջապես Բրանից եկած գնորդներին՝ 1200 դրամով:

Մսի իրացման խնդիրը հիմնականում առաջանում է աշնանը: Տարեկան իրացնում են մոտ 6 տոննա միս (գառ):

Բրդի իրացումը ևս խնդիր է, այն մասամբ պահեստավորում են, մասամբ նվիրում, մոտ 10%-ն էլ վաճառում կգ-ը 700դրամով:

**Խոզաբուծությամբ** Տաշիր համայնքում զբաղվում է մոտ 100 տնտեսություն:

Ամենամեծ տնտեսությունն ունի 150 գլուխ, որից մայրական կազմը 15 գլուխ է:

Իսկ միջին տնտեսություններն ունեն 10-20 գլուխ, փոքրերը՝ 5-10 գլուխ:

Համայնքում կա խոզերի բարելավված տեսակ (Յորկշիր/Yorkshire), որի քաշը ճիշտ խնամքի դեպքում մեկ տարեկանում կազմում է 180-210կգ (մաքուր միսը կազմում է 60%): Բրացումը կատարվում է հիմնականում Տաշիր համայնքում՝ 1կգ-ը 2500-3000 դրամ: Տարեկան իրացվում է մոտ 15 տոննա միս և գոճի, մնացածը օգտագործվում է սեփական սպառման նպատակներով:

Կերի մի մասը՝ խտացված կերը, ձեռք են բերում կիլոգրամը 250 դրամով, իսկ մյուս մասը՝ պանրաջուրը/շիճուկը/, անվճար ձեռք են բերում պանրի արտադրամասերից:

Հիմնական խնդիրներից է կերի բարձր զինը և իրացումը:

**Խոշոր եղջերավորների** մոտ 30%-ը բարելավված ցեղեր են (հոլշթեն, սևաբղետ, ջերսի), իսկ մնացածը՝ խորհրդային ժամանակներից ժառանգված կովկասյան գորշ և շվից տեսակները՝ միասին կազմելով մոտ 4000 գլուխ: Կովերի միջին տարեկան կաթնատվությունը 2,5 տոննա է, իսկ բարելավված ցեղերինը՝ 3,5-4 տոննա:

**Ֆերմերների բաշխվածությունն ըստ տնտեսությունների մեծության**

Ֆերմերների դասակարգում	Տնտեսությունների թիվ	Անասնազվիսաքանակ
խոշոր ֆերմեր	6	80-120 գլուխ
միջին ֆերմեր	30	20-50 գլուխ
փոքր ֆերմերներ (5-15 գլուխ)	80	5-20 գլուխ
տնային տնտեսություններ	400	1-3 գլուխ

Առաջատար ֆերմաներում օգտագործում են ամերիկյան տեսակի սերմանյութ, որի 1չափաբաժնի արժեքն է 2000 դրամ: Համայնքի մնացած ֆերմերներն օգտագործում են տեղականը, որի 1 չափաբաժնին արժե 150 դրամ: Արհեստական սերմնավորման աշխատանքներով հանդերձ գները դառնում են 5000 և 2000 դրամ:

100 գլուխ խոշոր եղջերավոր ունեցող ֆերմերները տարեկան ձեռք են բերում 20-30տ խտացված կեր Երևանի արտադրողներից:

Գրեթե բոլորը ֆերմաներում ունեն անասնակերի (կանաչ ոլոռ, գարի, վարսակ, եգիպտացորեն, խոտ և այլն) սեփական արտադրություն: Իսկ գյուղտեխնիկա ունեն մոտ 10 հոգի:

Փոքր ֆերմերները անասնակերի հավաքման ժամանակ հունձի, բերքահավաքի և այլ գյուղտեխնիկայի ծառայությունների վճարման համար միշտ խնդիր ունեն: Ամեն անգամ դիմում են քաղաքապետարան և օգնություն ստանում՝ ծառայությունների վճարման համար:

**Արդյունավետ (այն տնտեսությունը, որը բացի ինքնասպառման նպատակով արտադրելուց նաև հավելյալ արդյունք է ստեղծում վաճառելու նպատակով և շահույթ ստանում) անասնապահական տնտեսությունը կաթնարտադրության մասով Տաշիրում սկսվում է 20 կովից բաղկացած ֆերմայից, իսկ մսի արտադրության մասով՝ 30 գլխից բաղկացած ֆերմայից:**

Առաջատար ֆերմաներում մեկ կովի խնամքի համար կատարվող ծախսերը

Հոդված	Օրական ծախս	Տարեկան ծախս
<i>Ձմեռային սեզոնի գոմային 7 ամսվա (200 օր) պահվածքի համար</i>		
Խոտ	12 կգ * 25 դրամ	60 000
Միլոս	15 կգ * 20 դրամ	60 000
Խտացված կեր	1 կգ * 250 դրամ	50 000
<i>Շուրջ տարվա ծախսեր</i>		
Աղ	50գրամ * 100 դրամ/1կգ	2 000
Ջուր	50 լ * 160 դրամ/1լիտր	3 000
Կիրթ/աշխատավարձ	3000 դրամ/ամիս	30 000
Անասնաբուժական ծախսեր	5000 դրամ/տարի	5 000
Խնամողների աշխատավարձ	2հոգի * 80 000դրամ* 12 ամիս / 20	96 000
<i>Արոտի սեզոնի ծախսեր</i>		
Նախիր ուղարկելու վճար	2000դրամ/ամիս	10 000
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>316 000 դրամ</b>

Անասնապահության ճյուղի առաջատար ֆերմերների արտադրողականության հաշվարկ.

	Անվանում	Կթու կով	Մսատու հորթ
1	Օպտիմալ տնտեսություն	20 գլուխ	30 գլուխ
2	Տարեկան ստացվող արդյունքը մի կենդանուց	3500լ. կաթ 1 հորթ	120 կգ միս
3	Ընդհանուր տնտեսության արդյունքը 1 տարում	70 տ. կաթ 20 հորթ	3600 կգ
4	1կգ մսի և 1 լիտր կաթի մեծածախ գինը 1 հորթի գինը	140 դրամ 60 000դրամ	2200 դրամ
5	Ընդհանուր եկամուտը իրացումից	11 000 000	7 920 000
6	Կատարվող նյութական ծախսերը	3 800 000	3 500 000
7	Աշխատանքային ծախսումները	2 520 000	1 920 000
8	Տնտեսությունից ստացվող շահույթը (5-6-7)	4 680 000	2 500 000
9	Տնտեսության ավելացված արժեքը (5- 6)	7 200 000	4 420 000
10	Անհրաժեշտ մարդ օրերի քանակը	350	250
	Մեկ մարդու օրական արտադրողականությունը = (5-6) : 10	20 570դրամ	17 680 դրամ

Այս հաշվարկը հնարավորություն է տալիս հասկանալ, թե ծախսելով միևնույն ռեսուրսն ու ժամանակը, ո՞ր ուղղության դեպքում է ավելի շատ նոր արժեք ստեղծվում: Արդեն պարզ է, որ կաթ արտադրող ֆերմերը օրական 3 000 դրամով ավել արժեք է ստեղծում, քան միս արտադրողը: Եթե այս հաշվարկին գումարենք նաև այն գործոնը, որ Տաշիրում արտադրված մսի ապրանքային տեսքը զիջում է միս արտադրող այլ առաջատար համայնքներին, ինչի հետևանքով այն դժվար իրացնելի է դառնում, ապա անվիճելի է, որ կաթի արտադրությունն անհամեմատ արդյունավետ է և սպառման շուկան էլ՝ անհամեմատ ավելի մեծ է համայնքում: Իսկ ֆերմաներում ծնվող արունների մեծ մասը կարելի է ավելի վաղ հասակում վաճառել կամ փոխարինել երինջներով, որպեսզի նորից իրացման խնդիր չառաջանա:

**Անասնապահության**


**ճյուղի վերլուծություն**

Առաջատար ֆերմերների ներքին հատկությունները	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Սեփական կերարտադրություն /խոտ, սիլոս/, կերի բազմազանության ապահովում /կարտոֆիլ, գարի, խտացված կեր,.../:	Հեռագնա արոտներից օգտվելու ավանդույթի բացակայություն
Ժամանակակից սարքավորումների կիրառում՝ մեքենայացված կիթ:	Հովիվների պակաս:
Բարձր մթերատվության ապահովում, բարելավված ցեղերի համապատասխան խնամք:	Մարկետինգային և կառավարման հմտությունների պակաս:
Տոհմային ցեղերի բարելավում /գլխաքանակի 90%-ը/:	
Բավարար քանակի և նորակառույց գոմեր, բացօթյա պահվածք:	
Սեփական գյուղտեխնիկա (ոչ բոլորը):	
Հորմոնալ կերերի բացառում սննդակարգի մեջ:	



Գործոնների որակ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Էկոլոգիապես մաքուր և ալյաիական գոտի	Արոտավայրերը բարելավման կարիք ունեն, գոմային պահվածքը մոտ 7 ամիս է տևում
Բավարար քանակի արոտավայրեր՝ 1000 հա	Արոտավայրերը ջրարբիացված չեն
Պետական միջոցառումների առկայություն՝ անասունների պատվաստման ուղղությամբ:	Մուբսիդավորված վարկերը ունեն սահմանափակում մինչև 1 մլն դրամ, և ունեն սահմանափակ քանակ
Պետ. սուբսիդավորմամբ 10%-ոց վարկերի առկայություն	Այլ վարկերի անմատչելիություն և բարձր տոկոսադրույք
Հողի վարձակալության ցածր գներ՝ 1հա- 8000 դրամ	Վարձակալվող հեռագնա արոտավայրերում ենթակառուցվածքների բացակայություն

Պահանջարկի որակ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
	Համայնքում արտադրվող որակյալ և բարձր յուղայնությամբ կաթի պահանջարկը բավական մեծ է թե՛ համայնքում, թե՛ հանրապետությունում:
	Խոշոր ֆերմերներից կաթը մթերվում է 160-170 դրամով, իսկ փոքրերից՝ 140 դրամով, պայմանավորված որակի և քանակի գործոնով:
	Մսի ապրանքային տեսքը մուգ գույնի պատճառով տարբերվում է շուկայի և սպառողի պահանջներից, և հիմնականում այն գնում են վերամշակման նպատակով:



Հարակից ճյուղերի որակ	
Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Արհեստական սերմնավորման բարձրակարգ 3 մասնագետների առկայություն	Սպանդանոցների բացակայություն
Կաթի մթերման 10 կետ, իսկ գյուղերի հետ միասին՝ 25 կետ	Մսի վերամշակման բացակայություն
12 պանրի և կաթնամթերքի արտադրամաս	Խտացված կերերի արտադրության բացակայություն
Խտացված կերերի վաճառակետի առկայություն	Մսի մթերման կետերի բացակայություն
Մսի վերավաճառողների առկայություն	



**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

**ՆՊԱՏԱԿ - Անասնապահության արդյունավետությանը նպաստող գործոնների որակի բարելավում**

Գործողություն	Պատասխանատուներ
Արոտավայրերի ջրարբիացում	ՏԻՄ
Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղմեխանիզացիայի ձեռքբերում	CARE, ՓՄՁ ԶԱԿ, ՏԻՄ
Արոտավայր տանող ճանապարհներին գտնվող 2 կամուրջների վերականգնում	ՏԻՄ, այլ աջակից կառույցներ

**ՆՊԱՏԱԿ - Միջին ֆերմերային տնտեսություններում կաթի ինքնարժեքի նվազեցում**

Գործողություն	Պատասխանատուներ
Մինչև 6-8 % վարկերի ապահովում ժամանակակից ֆերմաների կառուցման համար	ՓՄՁ ԶԱԿ
Աջակցություն կթի սրահների և ավտոմատացված կթի սարքավորումների ապահով ձեռք բերման համար	CARE, CARD, ՓՄՁ ԶԱԿ
Խոտհունձի տեխնիկայի ձեռքբերման մատչելի պայմանների ապահովում ցածր տոկոսադրույքով կամ առանց տոկոսադրույքի:	ՓՄՁ ԶԱԿ, այլ աջակից կառույցներ
Սեփական գյուղտեխնիկայի ձեռքբերում	Ֆերմերներ
Ֆերմաներում ժամանակակից անասնապահական սարքավորումների օգտագործում	Ֆերմերներ

## Պանրի և կաթնամթերքի արտադրության ոլորտ


Տաշիրում գործում է պանրի և կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող 10 արտադրամաս: Պանրի արտադրությամբ համայնքը հայտնի է դեռևս խորհրդային կարգերի ժամանակներից: Ներկայիս արտադրամասերի մեծ մասը կազմավորվել են նախկինում պանրի գործարաններում ներգրավված մասնագետների կողմից, ովքեր անկախության առաջին տարիներից հիմնել են իրենց սեփական տնտեսություններն ու փոքր քայլերով կայացել ազատ շուկայական հարաբերություններում: Առաջատար ընկերությունների մասնագետները տարիների ընթացքում վերապատրաստումներ են անցել պանրագործությամբ հայտնի արտասահմանյան տարբեր երկրներում: Այժմ նրանք մրցունակ են Հայաստանի և արտասահմանյան մի շարք շուկաներում: Անցնող տարիների ընթացքում եղել են նաև փակվող ձեռնարկություններ, իսկ նրանք, ովքեր դիմացել են մրցակցությանը, շարունակաբար մեծացրել են արտադրության ծավալները:

Ներկայումս միջին չափի ընկերությունների մի մասը չեն կարողանում ընդլայնել արտադրության ծավալները՝ պահանջվող նոր սարքավորումների բարձր գների և լրացուցիչ ֆինանսական միջոցների (վարկերի) բարձր տոկոսադրույքների պատճառով: Իսկ եթե կարողանան վաճառել իրենց ունեցած սարքավորումները (որոնք ծավալների մեծացման դեպքում արդեն իրենց պետք չեն) սկսնակ կամ գործող փոքր արտադրամասերին, ապա նոր ֆինանսական միջոցներ ներգրավելու պահանջը զգալիորեն կկրճատվի:

Ստորև ներկայացված է կաթնամթերքի արժեքային շղթան ամբողջությամբ:

## ՊԱՆՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՇՂԹԱՆ ՏԱՇԻՐ ՔԱՂԱՔՈՒՄ

### Միկրո միջավայր





## Պանրի արժեչաթայի վերլուծություն

### Միկրոմիջավայր

#### Մատակարարումներ

Տաշիրում անասնակերի արտադրությամբ զբաղվում է շուրջ 500 տնտեսություն: Ստացված անասնակերի մոտ 80 %-ը տրամադրվում է սեփական անասնապահական տնտեսություններին ու ֆերմաներին: Մնացած 20%-ը վաճառվում է հարևան համայնքներին կամ այլ համայնքներից եկող գնորդներին: Անասնակերի 1կգ-ը վաճառվում է 40-60 դրամով:

Համայնքում առկա է գյուղտեխնիկայի զգալի պակաս: Առկա են մոտ 15 տարբեր տեխնիկական միջոցներ, որոնք պատկանում են 10 մեխանիզատորների/գյուղ. ծառայություններ մատուցողների: Նշված տեխնիկական միջոցները հին են և մաշված, չեն բավարարում գյուղատնտեսական (վար, ցանք, հունձ և այլ) աշխատանքներին: Այս բացը լրացվում է այլ համայնքներից ներգրավվող մեխանիզատորներով և գյուղտեխնիկայով: Մնացած ուղղություններով մատակարարումները (դեղորայք, անասնաբուժական ծառայություններ, ֆերմայի պարագաներ) հիմնականում բավարարում են կաթի արտադրության ծավալներին և պահանջներին:

#### Կաթի արտադրություն

Կաթի արտադրությամբ զբաղվում են շուրջ 500 տնտեսություններ: Համայնքում տարեկան արտադրվում է մոտ 6500 տոննա կաթ: Փոքր ու միջին տնտեսությունները կաթի մի մասը վերամշակում են իրենց ձմեռվա յուղի ու պանրի պաշարը հոգալու համար, իսկ մնացածը հանձնում Տաշիրում գործող 10 կաթնամթերքի և պանրի արտադրամասերին:

#### Կաթի վերամշակում

Գործող ընկերություններից ամենախոշորը «Դուստր Մելանիա», ընկերությունն է, որն ամբողջ ՀՀ-ում հայտնի է որպես առաջատար պանրագործական ընկերություն և արտադրում է միայն պանիր: Տեղադրված է ISO համակարգ:

«Դուստր Մելանիա»-ն ամռանը մթերում է օրական 10-12 տոննա կաթ, ձմռանը՝ 5 տոննա: Կաթի 80%-ը մթերում է Տաշիրից և հարակից գյուղերից, իսկ 20%-ը՝ Ստեփանավան քաղաքից: Արտադրում է 8 տեսակի պանիր՝ Ալաշկերտ, Տաշիր, Լավար, Չանաղ, Չեչիլ, Սուլուգունի, Հոլանդական և Լոռի:

Մնացած 9 կազմակերպությունները միջին ծավալի են: Կաթնամթերքի արտադրատեսականու մեջ բացակայում է միայն պաղպաղակը: Յուրաքանչյուր գործարան մթերում է օրական 3,5 - 6 տոննա կաթ: Գործարանների մի մասը մթերումը կազմակերպում է սեփական ավտոմեքենաներով, մի մասն էլ գնում է կաթը միջնորդ օղակներից: Մթերման գները 130-160 դրամ են՝ կախված կաթի ծավալից և որակից: Ընդհանուր առմամբ Տաշիրում մթերվում և վերամշակվում է օրական 50-60 տ. կաթ:

Գործարանների մեծ մասում սարքավորումների վերազինման և արդիականացման կարիք կա: Դրանց մոտ 80%-ը հին են և մաշված:

## Վաճառք-Շուկա

Պանրի և կաթնամթերքի իրացումը կատարվում է գործարանների առաքիչների և վերավաճառողների միջոցով: Գործարաններն իրենք մատակարարում են Լոռու և Երևանի սուպերմարկետներին և որոշ խանութների՝ պայմանագրային հիմունքներով: Պետության մյուս մարզեր և Երևանի թաղամասեր արտադրանքը հասնում է Երևանից և այլ բնակավայրերից եկող վերավաճառողների միջոցով: Առկա է վերավաճառողների մշտական խումբ՝ բաղկացած մոտ 30 մարդկանցից, և փոփոխվող խումբ՝ տարբեր ժամանակահատվածում տարբեր մարդիկ:

«Դուստր Մելանյա» ընկերությունն իր արտադրանքի 55%-ն արտահանում է ԱՄՆ (25%) և ՌԴ (30%): Արտադրանքի 45%-ը իրացնում է ՀՀ շուկայում՝ Տաշիրի, Ալավերդու, Արմավիրի, Վանաձորի, Դիլիջանի և Իջևանի խանութներում, ինչպես նաև Երևանի խանութներում և սուպերմարկետների ցանցերում՝ ՍԱՍ, Երևան Սիթի և այլ պայմանագրային հիմունքներով:

Իսկ «Տաշիր» գործարանի պանիրը տարածվում է Հայաստանում գործող «Տաշիր Պիցցա»-ների ցանցին:

Լոռի պանրի մեծածավալ բացթողնման գինը 1800 դրամ է: Իսկ գործարաններին կից խանութներում՝ 2000դրամ: Գրեթե բոլոր գործարաններն ունեն կից վաճառակետեր:

Ընդհանուր ծավալով համայնքում արտադրվում է մոտ 2000 տոննա կաթնամթերք, որի 15 %-ը «Դուստր Մելանիա» –ի կողմից, իսկ 85 %-ը՝ մնացած ընկերությունների կողմից:

## Աջակից կառույցներ

**ԳԱՄԿ**- Դասընթացներ և խորհրդատվություն է մատուցում անասնակեր արտադրողներին (մատակարարներ) և կաթ արտադրող տնտեսություններին: Իրականացնում է սեմինարներ կարտոֆիլի մշակման տեխնոլոգիաների, գուղատնտեսական կենդանիների հիվանդությունների և դրանց կանխարգելման վերաբերյալ:

**USAID** – Կազմակերպել է պանրագործ-մասնագետների վերապատրաստում և փորձի փոխանակում Հայաստանում և արտասահմանյան երկրներում:

**CARD** – Աջակցել է պանրի գործարանների ընդլայնման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման, համաֆինանսավորման և մասնագետների վերապատրաստման ուղղություններով:

**Բանկեր և միկրոֆինանսական** կազմակերպություններ- տրամադրում են վարկային միջոցներ արժեշտիթայի բոլոր հատվածներում:

## Պետական աջակցություն

**Կառավարություն** - սուբսիդավորմամբ տրամադրում է դիզ.վառելիք, սերմացու և պարարտանյութ՝ հացահատիկ և անասնակեր արտադրողներին, և անվճար տրամադրում անասունների պատվաստանյութեր, ինչպես նաև կազմակերպում է կրծողների դեմ պայքարի միջոցառումներ: 2012 թվականի գարնանը հողօգտագործողներին շուկայականից զգալիորեն ցածր գնով (1 պարկը 6000 դրամ, ներառյալփոխադրման ծախսերը) հատկացվել է ազոտական պարարտանյութ, ինչպես նաև դիզելային վառելանյութ՝ 1 լիտրը 350 դրամով: Նշված ռեսուրսների իրացման գնի և շուկայական գնի տարբերությունը սուբսիդավորվել է ՀՀ կառավարության կողմից:

**ՏԻՄ** –Արոտավայրերի տրամադրում, պետական միջոցառումների վերահսկում (անասունների պատվաստում, սուբսիդավորված սերմացուների և վառելիքի բաշխում և այլն), հողերի վարձակալությամբ տրամադրում՝ ֆերմերներին, հողագործներին:

## Կանանց մասնակցությունը կաթնամթերքի արժեղթայի մեջ

### Մատակարարում

**Անասնակերի արտադրությամբ** զբաղվող տնտեսություններում կանանց 90%-ը մասնակցում է դաշտում խոտի հավաքման (փոցխում), ֆերմաներում տեղավորման/կուտակման և աշխատուժի սննդի պատրաստման աշխատանքներին:

**Խտացված կերերի** 5 վաճառակետերից երեքում աշխատում են կանայք՝ որպես վաճառողուհիներ:

**Անասնաբուժական 3 դեղատներից** մեկում է միայն կին աշխատում՝ որպես վաճառողուհի:

**Տնտեսական պարագաների** (դույլ, ձեռնոց, համազգեստ և այլն) վաճառքում ներգրավված է 6 կին՝ որպես վաճառողուհի:

### Կաթի արտադրություն

**Անասնապահական խոշոր տնտեսությունները** վարում են տղամարդիկ, ֆերմաներում կիթը հիմնականում ավտոմատացված է, և 90% ով զբաղվում են տղամարդիկ և միայն 10%-ը կանայք:

**Անասնապահական միջին տնտեսություններ**

*կանանց դերը և մասնակցությունը.*

Աշխատանք	Կին	Տղամարդ
Տնտեսության վարում և կազմակերպում	50%	50%
Կիթ	98%	2%
Հորթերի խնամք	90%	10%
Ֆերմաների/գոմերի մաքրություն	30%	70%
Արոտների կազմակերպում	1%	99%

**Անասնապահական փոքր տնտեսություններում** կանանց 80%-ը մասնակցում է աշխատանքների բոլոր փուլերում:

### Կաթի վերամշակում

Կաթնամթերքի գործարաններում կանայք հիմնականում ներգրավված են արտադրական պրոցեսում և ադմինիստրատիվ աշխատանքներում (հաշվապահություն և այլն): Տղամարդիկ մասնակցում են միայն ֆիզիկական աշխատանք պահանջող փուլերին, մթերմանը, առաքմանը, և հանդես են գալիս տեխնոլոգների դերում:

Բոլոր պանրի գործարանները միասին ունեն մոտ 150 կին աշխատողներ: Միջին աշխատավարձը 70 000 դրամ է:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՆՐԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

**ՆՊԱՏԱԿ-** Պանրագործության արդյունավետության բարձրացում և ծախսերի կրճատում.

Գործողություն	Պատասխանատուներ
Պանրագործության օգտագործված սարքավորումների առք ու վաճառքի մեխանիզմների ստեղծում:	ՓՄՁ ԶԱԿ, պանրագործներ
Երկխոսություն կաթ արտադրողների և պանրագործների հետ:	Պանրագործներ, ֆերմերներ
Մատչելի վարկերի և լիզինգային պայմանների տրամադրում, ժամանակակից սարքավորումներով վերազինման նպատակով:	ՓՄՁ ԶԱԿ, այլ աջակից և ֆինանսական կառույցներ

## ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՃՅՈՒՂԵՐ

Առևտուր՝ 150-160 կետ	Արտադրություն՝ 40	Ծառայություններ
40 պարենային ապրանքների առևտուր	3 քարամշակում	10 վարսավիրական ծառայություն
7 տնտեսական և կենցաղային ապրանքներ	2 եվրո դռների և լուսամուտների արտադրություն	7 հասարակական սնունդ
4 շինանյութի խանութ	6 հացի արտադրամաս	8 գրանցվ. տաքսի ծառայություն, 70 անհատ.
20 հագուստի խանութ	10 կաթնամթերքի արտադրություն	5 ավտովագման կետ
4 դեղատուն	3 զովագուցիչ ըմպելիքների արտադրություն	5 ավտոտեխսպասարկում
5 անասնակերի վաճառքի կետ	2 փայտամշակում	6 ատամնաբուժարան
3 անասնաբուժական դեղատուն	2 կահույքի արտադրամաս	4 կոշիկի վերանորոգման կետ
20 բացօթյա առևտուր	1 տրիկոտաժի արտադրամաս	1 հաշվապահական ծառայություն
6 էլեկտրոտեխնիկայի խանութ	8 կիսաֆաբրիկատների (կոտլետ, պելմենի, պիցցա և այլն) արտադրություն	10 մեծահասակների խնամում /խնամակալներ/
4 կահույքի խանութ	2 սունկ աճեցնող ընկերություն	6 կար ու ձև/պատվերով
20 սեզոնային շրջիկ առևտուր		3 հարսանյաց սրահ
2 ձկան վաճառքի կետ		3 հեռ. օպերատոր , 30 լիցքավորման կետ
4 մսի վաճառքի կետ		8 պատճենահանման կետ
		4 էլեկտրոտեխնիկայի վերանորոգում և սպաս.
		2 սզո ծառայություն
		3 ֆոտո

## Հագուստի արտադրությունը Տաշիրում

2009թ Վանաձորի «Գլորիա» կարի արտադրամասը մասնաճյուղ է բացել Տաշիր համայնքում: Արտադրամասի արտադրանքի սպառումը ամբողջովին իրականացվում է արտերկրում:

Հիմնական պատվիրատուները գերմանական կազմակերպություններ են: Ներկայումս կա պատվեր նաև ՌԴ-ից և նախնական պայմանավորվածություն Վրաստանի ՊԲ-ի հետ:

Հումքը՝ կոճակ, թել, կտոր և այլն, նույնպես ներմուծվում է արտերկրից՝ պատվիրողի կողմից:

Արտադրամասի հիմնական ուժեղ կողմերից է.

- արտադրական որակը,
- մասնագետների առկայությունը,
- արդիական սարքավորումներ,
- իրականացնում է բազմատեսակ պատվերներ՝ հագուստ, անկողնային պարագաներ, մոտոցիկլավարների պաշտպանիչ հագուստ և այլն,
- իրականացվում է նաև տարբեր տեսակի տպագրություններ հագուստի վրա:

Ըստ գործադիր տնօրենի՝ տեղական կամ միջազգային շուկայում առանձին անվանումով մրցելը անհիմաստ է, քանի որ Հայաստանում բացակայում են ճանաչված և բարձր մակարդակի մոդելավորող դիզայներները, կամ, եթե առկա են, ապա նրանք մրցունակ չեն հագուստի շուկայում:

Արտադրամասում աշխատում են 100 մարդ, որոնցից 90-ը՝ կանայք:



Հատուկ շնորհակալություն Տաշիրի քաղաքապետարանի անձնակազմին՝ ի դեմս քաղաքապետ պարոն Էդգար Արշակյանի, ծրագրի հյուրընկալման և գործընթացի աջակցության համար:

**Տեղական թիմի անվանացանկ**

<i>h/h</i>	<i>Մասնակիցներ</i>	<i>Զբաղվածության ոլորտ</i>	<i>Հեռախոս</i>
1	Նահրա Հակոբյան	Թիվ 1 դպրոցի ուսուցչուհի	094-75 58 00
2	Կարինե Մուրադյան	ՏԻՄ աշխատակից	094 231310
3	Արարատ Յավրումյան	ՏԻՄ աշխ., գյուղատնտես, մեղվաբուծ.	094 12 06 11
4	Արմեն Շահբազյան	ՏԻՄ աշխատակից	094 05 33 31
5	Կարինե Մուրադյան	ՏԻՄ աշխատակից	094 23 13 10
6	Արթուր Պողոսյան	Խոզաբուծություն	093 771830
7	Էդուարդ Օհանյան	Ֆերմեր	077 755696
8	Միսակ Քերոբյան	Ֆերմեր	**